ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունիսի 2-ին, շաբաթ օր, «Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ երն ի վիրապէն» տոնին, Ս. Իջման սեղանի վրա պատարագեց Տ. Վահան արեղա Գալամդարյանը և ավուր պատշաճի քարոզ խոսեց։

❊❊❊

Հունիսի 3-ին, կիրակի, Կաթողիկե Ս. Էջմիածնի տոնին, Մայր Տաճարում պատարագեց Տ. Եղիշե արեղա Սարգսյանը։ Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։ Պատարագի ավարտին տեղի ունեցավ Հայրապետական մաղթանք։ Պատարագիչ Տ. Եղիշե արեղան քարոզեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հիմնադրության և նրա կատարած գործունեության մասին։

❊❊❊

Հունիսի 3-ին, կիրակի օրը, Երևանի Ս. Զորավոր եկեղեցին տոնական տեսք էր ստացել։ Հավատացյալների հոծ բազմությունը հավաքվել էր եկեղեցի։ Այդ օրը պետք է կարդացվեր Վեհափառ Հայրապետի անդրանիկ կոնդակը։

Մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ։ Պատարագիչն էր Տ. Լևոն քահանան։ Պատարագի կեսին կարդացվեց Վեհափառ Հայրապետի կոնդակը, որից հետո կատարվեց Հայրապետական մաղթանք և ապա շարունակվեց պատարագը։

Ժողովուրդը դոհ և ուրախ մեկնեց եկեղեցուց։

Նույն օրը Երևանի Ս. Սարգիս և Կոնդի Ս. Հովհաննես եկեղեցիներում արժանավայել հանդիսավորությամբ կարդացվեց Ամենայն Հայոց Հայրապետի անդրանիկ կոնդակը և կատարվեց Հայրապետական մաղթանք։

❊❊❊

Հունիսի 21-ին, հինգշաբթի օրը, ավանդական շքեղությամբ տոնվեց «Սրբոց Թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրովբայ» տոնը։

Առավոտյան ժամը 9-ն է։ Մայր Աթոռի միաբանությունը կազմ ու պատրաստ է որպես ուխտավոր հայ ժողովրդի ազգանդավոր զավակի՝ Ս. Մեսրոպ Մաշտոցի շիրիմին ուխտի գնալու և ծնրադրելու նրա առաջ։

Մեծ սրբին ուխտի էր եկել հայ ժողովրդի հոծ բազմություն։ Վանքի բակը և շրջակայքը լի էր ժողովրդով։ Բացի Մայր Աթոռի միաբանությունից Ս. Մեսրոպի ուխտաւորին էին եկել նաև մեկ տասնյակից ավելի քահանաներ։ Օրվա պատարագիչն էր Մայր Աթոռի միաբան բարձրաշնորհ Տ. Մաշտոց արեղա Թաքիրյանը, որը «Հայր մեր»-ից առաջ հակիրճ, բայց ազդու կերպով բացատրեց Ս. Սահակի և Մեսրոպի կատարած հսկա աշխատանքի անուրանալի նշանակությունը հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու համար։ Քարոզիչ հայրը սուրբն իր խոսքն ավարտեց կոչ անելով հավատացյալներին, որ նրանք ավելի սերտ կերպով բոլորվեն մեր Ազգային Ս. Եկեղեցու շուրջը և պահպանեն հայերեն լեզուն և դարավոր մշակույթը, մեր Ս. Եկեղեցին։

Սուրբ պատարագից հետո տեղի ունեցավ հոգեհանդիսատ նվիրված հայ մտքի մշակների հիշատակին։

Երեկոյան Մայր Աթոռի միաբանությունը վերադարձավ Էջմիածին։

❊❊❊

Հունիսի 24-ին, կիրակի, «Գիւտ տփոյ Սրբուհւոյ Աստուածածնի» տոնի օրը, Մայր Տաճարում քարոզեց բարձրաշնորհ Տ. Մեսրոպ արեղա Անթարյանը Սրբոց Թարգմանչաց մասին։

❊❊❊

Թեմական գործերով Մայր Աթոռ ժամանեց Բաքվի և Թուրքեստանի առաջնորդ գերաշնորհ Տ. Եղնիկ եպիսկոպոս Ազնավուրյանը, որը գործերը կարգավորելուց հետո մեկնեց իր պաշտոնատեղին։

❊❊❊

Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ Տ. Պարգև աբեղա Գևորգյանը աղատվեց Վեհափառ Հայրապետի գավազանակրի պաշտոնից և նշանակվեց Մոսկվայի հայոց հոգևոր հովիվ։ Հոգեշնորհ հայր Պարգևը մեկնեց իր պաշտոնատեղին։ Վեհափառ Հայրապետի գավազանակիր է նշանակված հոգեշնորհ Տ. Մեսրոպ աբեղա Անթաբյանը։

❊❊❊

Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ Թբիլիսիի և Ռոստովի առաջնորդների օգնական նշանակվեցին Մայր Աթոռի միաբաններ Տ. Տ. Վահան և Հայրիկ աբեղաները, որոնք մեկնեցին իրենց նոր պաշտոնատեղիները։

❊❊❊

Հունիսի 24-ին Ամերիկայի Միացյալ Նահանգներից Մայր Աթոռ վերադարձավ Մայր Աթոռի միաբան, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, որ մասնակցում էր Նյու-Յորքում տեղի ունեցած ԱՄՆ-ի և ՍՍՌՄ-ի քրիստոնեական եկեղեցիների ժողովին, որպես Ամենայն Հայոց Հայրապետի ներկայացուցիչ։